Հավելված
ՀՀ վարչապետի 2013 թ.
փետրվարի 19-ի N 135 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀՆԱ-13 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	ՀՀ Նախագահի 2012 թ. դեկտեմբերի 20-ի ՀՆԱ-13 հանձնարարականի կետերը	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու մարմինը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6	7	8
1.	Քննարկել և ներկայացնել առաջարկություններ Տրանսպորտային հաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների (ՄԻՏԱ) համակարգի գործունեության, ավիացիոն անվտանգության ծառայության անձնակազմի մասնագիտական ունակությունների, ինչպես նաև օդանավակայանում գործող ծառայությունների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման վերաբերյալ	1.1. «Մեկ պատուհան, մեկ կանգառ» սկզբունքի կիրառման նպատակով ուսումնասիրությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում, անհրաժեշտության դեպքում, ծրագրի ընդունում	պետական սահմանի համալիր կառավարման ոլորտի գործող ծառայությունների միջև առկա համագործակցության բարելավում	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	

1	2	3	4	5	6	7	8
2.	Քննարկել տուրիստական ավտոբուսների՝ պետական սահմանի անցակետերի տարածք ժամանակավոր բացթողման կանոնակարգման հարցը՝ զբոսաշրջիկների կողմից սահմանահատման գործընթացները դյուրացնելու և զբոսաշրջությունը խթանելու նպատակով	2.1. պետական սահմանի անցակետի տարածքում՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության հսկողության ենթակա բեռների ներմուծման ու արտահանման ընթացակարգերի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կայքի ու «թեժ գծի» մասին տեղեկատվություն պարունակող ցուցատախտակների տեղադրում	զբոսաշրջիկների կողմից սահմանահատման գործընթացները դյուրացնելու և զբոսաշրջության խթանման նպատակով	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	
		2.2. միջպետական պայմանագրերի կնքման ուղղությամբ աշխատանքների իրականացում	զբոսաշրջային տրանսպորտային միջոցների, դրանց վարորդների և զբոսաշրջային խմբերին ուղեկցող անձանց (օրինակ՝ զբոսավարների) համար հարևան երկրի սահմանը չհատելու պայմանով պետական սահմանի հայկական անցումային կետով բաց թողնելու ռեժիմի կիրառման հնարավորության ապահովում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	

1	2	3	4	5	6	7	8
		2.3. մեծ ավտոբուսների ուղևորների գրանցումը մարդատար գնացքի ուղևորների գրանցման սկզբունքով՝ ավտոբուսի ներսում սահմանապահ զորքերի զինծառայողի կողմից շարժական ստուգում ապահովելու միջոցով	զբոսաշրջիկ-ների կողմից սահմանահատ-ման գործընթացները դյուրացնելու և զբոսաշրջության խթանում	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	
		2.4. զբոսաշրջության խթան-ման և զբոսաշրջային շուկային մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպա-տակով ուսումնասիրությունների իրականացում և ծրագրի մշակում	զբոսաշրջիկ-ների կողմից սահմանահատ-ման գործընթացների դյուրացում, զբոսաշրջային շուկայի միջազգային ստանդարտ-ներին համապատաս-խանեցում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	
3.	Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ բեռնատար ավտոմեքենաների թույլատրելի ծանրաբեռնվածության սահ-մանաչափի հետ կապված միջազգային առաջավոր փորձին ու միջպետական	3.1. մշակել և ներկայացնել ՀՀ օրենսդրական փոփոխություն-ների նախագծեր՝ միջազգային փորձին ու միջպետական չափորոշիչներին տվյալ բնագավառի ՀՀ իրավական ակտերը	սահմանա-փակումների կիրառման, ինչպես նաև սահմանափա-կումների նկատմամբ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2013 թ. 1-ին կիսամյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	

1	2	3	4	5	6	7	8
	չափորոշիչներին համապա-տասխան անհրաժեշտ սահմանափակումների կիրառման, ինչպես նաև սահմանափակումների նկատմամբ վերահսկողություն ապահովելու նպատակով	համապատասխանեցնելու նպատակով	վերահսկողու-թյուն ապահո-վելուն ուղղված աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով				
		3.2. սահմանային անցակետերում և ներհանրապետական փոխադրումների հանրապետական նշանակության հիմնական ճանապարհներին (Ալավերդի, Քաջարան, Երասխահուն, Աբովյան, Վարդենիս) նոր, դինամիկ կշեռքների տեղադրման նպատակով ծրագրի մշակում	վերահսկողու-թյուն ապահո-վելուն ուղղված աշխատանքների առավել արդյու-նավետ կազմա-կերպում միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շահագործման ժամկետների ավելացում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	
4.	Քննարկել և ներկայացնել առաջարկություններ պետա-կան սահմանի «Մեղրի» անցա-կետի վերակառուցման և արդիա-կանացման վերաբերյալ՝ հաշվի առնելով սահմանային անվտան-գության ապահովման ոլորտում որդեգրված միասնական մոտեցումները	Առաջարկում ենք հարցին անդրադառնալ Իրանի Իսլա-մական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության սահմանում «Մեկ պատուհան, մեկ կանգառ» ծրագրի գործար-կումից հետո:					
5.	Քննարկել պետական սահմանի գործող անցակետերում ուղևոր-ների հոսքերի ծավալների	5.1. մաքսային հայտարա-րագրերի կիրառման ընթացակարգերի	պետական սահմանի գործող	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	

1	2	3	4	5	6	7	8
	կտրուկ ավելացման ժամանակ մաքսային հայտարարագրերի կիրառման ընթացակարգերի պարզեցման, ինչպես նաև «Մեղրի» անցակետում պարսկերենով գրառումների ապահովության հարցը	պարզեցման նպատակով ցուցատախտակների տեղադրում	անցակետերում զբոսաշրջային շուկային մատուցվող ծառայություն-ների որակի բարձրացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն			
6.	Քննարկել պետական սահմանի անցակետերում, անհրաժեշտության դեպքում, տեղում, անձնագրերի վավերականության ժամկետների երկարաձգման հնարավորության հարցը	6.1. անձնագրերի և վիզաների վարչության (Զվարթնոց օ/կ բաժին, Բավրա բաժանմունք, Բագրատաշեն բաժանմունք, Մեղրի բաժանմունք, Գոգավան խումբ) բաժանմունքների տեխնիկական վերազինում	պետական սահմանի անցա-կետերում, անհրաժեշտու-թյան դեպքում, տեղում, անձնագրերի վավերականու-թյան ժամկետների երկարաձգում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	
		6.2. անձնագրերի և վիզաների վարչության համակարգչային կենտրոնում 4 հաստիքի ավելացում	պետական սահ-մանի անցակե-տերում, անհրա-ժեշտության դեպ-քում, տեղում, անձնագրերի վավերականու-թյան ժամկետ-ների երկարաձգում	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	2014 թ.	ՀՀ պետական բյուջե	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

13_135